

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Մատուրեանի խնամով:

Օտարաբարձարների դեմում են ուղղակի
Тифлис. Редакция „Менк“

Խմբագրատանը բաց է առևտուրն 10-2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարությունների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ամեն բան պէտք է բացատրել: — Երբ ինչ
տեսակի ինչ: Գարձեալ մի քանի խօսք «Օճ-
ՅՅՅ» լրագրի մասին: «Մտնական թերթ»
ամսագիրը: — Արտաքին տեսակի ինչ: Գեր-
մանիա, Արտաքին լուրեր: — «Մշակի» հեռագիր-
ներ: — Յայտարարություններ: — Տեղեկացոյց: —
Ֆելիտա օն:

ԱՄԵՆ ԲԱՆ ՊԵՏԻ Է ԲԱՅԱՏՐԵԼ

Մինչև այժմ մեր հասարակու-
թիւնը չէ հասկանում ինչ բան է
մի լրագրի ուղղութիւնը: Եթէ
այդ չէ հասկանային հասարակ,
անուս, ուսմիկ մարդիկ, — այդ շատ
բնական կը լինէր: Բայց ի՞նչ
կատէք եթէ համոզվէք որ ու-
սում առածներն էլ, բարձր ուսում
ստացածներն էլ ու մեր լրագրու-
թեանը իրանք ուղղութիւն տուող-
ներն էլ իրանց հասկացողութեամբ
հեռու չեն գնացել ուսմիկների հաս-
կացողութեանց:

Լրագրին ուղղութիւն տուողը
խմբագրութիւնն է, կամ խմբա-
գիրը, այսինքն մի ընկերութիւն,
կամ մի անձն, — նայելով թէ ո՞վ
է կառավարում լրագիրը: Այն
ամեն յօդուածները, որոնք խմբա-

գրական յօդուածներ են, որոնք
ուղղութիւն տուող են, — նորա
պէտք է միանման ուղղութիւն ու-
նենան, ինչպէս օրինակ՝ առաջ-
նորդող յօդուածը, ներքին և
արտաքին տեսութիւնների ընդ-
հանուր յօդուածները:

Բայց ի՞նչ պարտաւորութիւն
ունի խմբագրութիւնը պատաս-
խանատու լինել այն յօդուածների
համար, որոնք կամ ուրիշ քա-
ղաքներից են ուղարկվում, ուրեմն
ուրիշ բան չեն եթէ ոչ թղթակ-
ցութիւններ, կամ թէ կուղ նոյն
քաղաքումն են գրված, որտեղ
հրատարակվում է լրագիրը, բայց
գրված են լինում ոչ թէ խմբա-
գրութեան կուսակից մի անձից,
այլ այնպիսի մարդուց, որ իր միտքը
յայտնելով, իր գրվածքի համար
հրատարակութիւն է խնդրում լրա-
գրի էջերի մէջ:

Այդ տեսակ յօդուածներ մեծ
մասամբ ստորագրված են լինում
կամ իսկական անունով, կամ կեղ-
ծեալ անունով, կամ գոնէ մի որ
և է նշանով:

Ռուսաց «ԳՕԼՕՇԵ» լրագիրը ունի
իր յայտնի ուղղութիւնը: Բայց

ոչ որ չէ համարձակվել ասել
թէ «ԳՕԼՕՇԵ» զուրկ է ուղղու-
թեանից, որովհետև այս ամառը
տպում էր հայերին սաստիկ հա-
մակրական նամակների մի շարք,
իսկ նորերումն տպել է հայերին
թշնամական պ. Միքէլաձէի յօ-
դուածը: Գործնով «ԳՕԼՕՇԵ» ցոյց
է տուել իրան ոչ թէ ուղղութիւն
չունեցող, այլ անկողմնապահ դէպի
իր թղթակիցները:

Գծի տակ լրագրական բաժ-
նում թէև շատ անգամ տպվում
են խմբագրութեան կուսակից ան-
ձների գրվածքները, կարող է տը-
պվել և մինչև անգամ իրան խըմ-
բագրի հեղինակութիւնը, — բայց
այդ տեսակ յօդուածները իսկոյն
իմացվում են իրանց ուղղութեանից,
կամ ստորագրված են լինում:

Բայց շատ անգամ մի թղթակ-
ցութիւն, կամ մի ընդհանուր յօ-
դուած որ մի մասնաւոր մարդու
մտքի արտայայտութիւն է լինում,
այնքան երկար է լինում, կամ
այնքան մշակված և բանասիրա-
կան ձև ունի, որ նրան անկա-
րելի է տպագրել որպէս թղթ-
թակցութիւն կամ նամակ

խմբագրին, — այլ լրագիրը
ստիպված է լինում տպել այդ տե-
սակ գրվածք բանասիրական
բաժնում: Այդ դեռ չէ նշանա-
կում որ լրագիրը համաձայն է
այդ տեսակ յօդուածի ուղղութեան
հետ:

Լրագիրը պատասխանատու է
միայն իր առաջնորդը և ընդհա-
նուր, ուղղութիւն տուող յօդուած-
ների համար և ոչ թէ թղթակ-
ցութիւնների և գծի տակ տպվող
յօդուածների մեծ մասի համար:

Այն բաժնիներում, որոնք խըմ-
բագրական բաժնիներ չեն, այլ
որտեղ ամեն մի մտածող մարդ
կարող է գրել, որի գրվածքը իր
տեսակում խմբագրութիւնը ար-
ժանի կը գտնի տպագրված լինե-
լու, — այն բաժնիներում, ասում
ենք, մինչև անգամ լրագրին բոլը-
րովին հակառակ ուղղութեան յօ-
դուածներ տպելով խմբագրու-
թիւնը ուղղութեան պակասու-
թիւն չէ ցոյց տալիս, այլ ցոյց է
տալիս իր անկողմնապահ յօ-
դուածներ:

Ամենքը գիտեն մենք ինչ կար-
ծիք ունենք թիւրքիայի մասին:

ՖԵԼԻՏՈՆ

Ամենքը յարձակվում են «Մշակի» դէմ: — «ՃԱՐԻ-
ԿՕՇԵ» լրագիրը: — Պրոբուս և նորա մտքերը: —
Լուս է կեթե հայտնում են: — Երբ Պալմերստոնի
խօսքերը: — «ՕճՅՅՅ» լրագիրը և նորա մեզ
տուած ինքնատիպը: — Մեր ինտելիգենցիան: —
Իմ մի ծանօթ տիկին: — «ՕճՅՅՅ» լրագրին տուած
մի նոր անուն: — Թիֆլիսի հայ ինտելիգենցիան և
գաւառացի հայը: — Երբ «Մշակի» լրագրին ամ-
սագիրը: — Հայկական Աշխարհ: — Թիֆլիսի ան-
շարժութիւնը: — Մօզդոկի հայերը: — Հայ-կաթ օլիկ
մի պարոն:

Ոչ մի տարի «Մշակի» դէմ այդքան շատ չեն
յարձակվել, որքան այս տարի, այն օրից, երբ
մեր լրագիրը ամենօրեայ դարձաւ: Բացի այն
մշտական յարձակումներից, որոնց վրա մենք
բանի մի տարի է արդէն ուղղութիւն չենք
զարձնում, այժմ էլ մարդ, էլ լրագիր չը մնաց
որ մեզ վրա շարձակվի սկսած Թիֆլիսի «ՕճՅՅՅ»
թերթից, մինչև խաբուսում հրատարակվող
«ՃԱՐԻԿՕՇԵ» լրագիրը...

Ընթերցող երեկ կը զարմանայ, կասէ՛ որտե-
ղից որտեղ... Խարկովում հրատարակվող ու-
սաց լրագիրը «Մշակի» դէմ է յարձակվում: Բայց
այդ երկուքը շատ հեշտ կերպով է բացատրվում
երեկի «ՃԱՐԻԿՕՇԵ» նոր լրագրի խմբագիրը մեր
հին ծանօթ պ. Եղեշիկ Ստեփանիչ Ստալինս-
կիչ, «ՌԱՅԵՅԻՆ» լրագրի նախկին խմբագիրն է,
որ ամեն բան արաւ որ «Մշակ» լրագիրը ոչն-

չացնէ, հասարակութեան առջև նրա յարգանքը
վայր գցէ, նրա անունը կտրէ, — բայց կարողա-
ցաւ միմիայն իր սեփական «ՌԱՅԵՅԻՆ» լրագրի
յարգանքը կատարելագոյն վայր գցել, նրա ա-
նունը կտրել:

Սկզբից ես, որպէս ասիացի շատ տխրում էի,
երբ տեսնում էի թէ «Մշակի» վրա յարձակվում
են, բայց այժմ սաստիկ ուրախանում եմ, որով-
հետև խմբագիրը բացատրեց ինձ թէ Եւրօպա-
յում երբ որ մի լրագրի մի գրքի, մի հիմնարկու-
թեան, մի գաղափարի, կամ վերջապէս մի անձ-
նաւորութեան դէմ յարձակվում են, — նշանա-
կում է թէ այն լրագիրը, այն պիքքը, այն հիմնար-
կութիւնը, այն գաղափարը կամ անձնաւորու-
թիւնը ուղղութեան արժանի են:

Մի ֆրանսիացի գիտնական, որքան յիշում եմ
նրա անունը Պրոբուս էր, ասում էր՝ ամենից
վատ բան է երբ մի նոր դուրս եկած գրքի վրա
ոչ ոք չէ խօսում, առելի լաւ է, երբ նրան դո-
վում են, բայց ամենից լաւ բան է երբ սաս-
տիկ յարձակվում են գրքի դէմ, հայ հո-
յուսում են նրան, — նշանակում է թէ գիրքը ու-
ղղութեան արժանի է և նրա մէջ յայտնած
գաղափարները ապագայ ունեն:

Այդ պատճառով ես այժմ միշտ ուրախանում
եմ, երբ ինձ հայտնում են: «Հայտնեցէք մեզ,
բայց կարողացէք մեր գրվածքները» ասեց Եւրօ-
պացի գիտնականներից մինք (այդ էլ խմբագ-
րից սովորեցի):

Եւ ճշմարիտ ինչ դուր եկան, հաճելի բան է,
երբ տեսնում ես որ քեզ յիշում են լրագրի մէջ,
անունդ տպում են: պ. Ա. ի աջի այնպէս ասեց,
պ. Ա. ի աջի այնպէս արեց և այլն... Ամեն կողմից քեզ հայտնում են, ամենամակնայն
ձեւերով քեզ դէմ յարձակվում են... դու վերջա-
պէս համոզվում ես որ հաշտվում ես, ստուն ես
ստանում հասարակութեան մէջ:

Անդիպում, ինչպէս պատմում են, չը գիտեմ
քսան թէ երեսուն տարի առաջ, կար մի մի-
նիստը-նախագահ, որի ազգանունն էր Պալ-
մերստոն: Մի առաւօտ մինիստրի մի բարե-
կամ մտնելով լոբի Պալմերստոնի սենեակը գըտ-
նում է նրան շատ տխուր արամաղութեան մէջ:

— Ի՞նչ է պատահել ձեզ, հարցնում է մանուղ
մինիստրից:

— Բարեկամ, պատասխանում է տխուր ձայնով
լոբի Պալմերստոն, երեկ իմ աստղը հանգաւ, էլ
ես նշանակութիւն չունեմ Անդիպում...
— Ինչի:

— Որովհետև «Punch» ծաղրական լրագիրը,
որ մինչև այժմ ամեն օր ինձ վրա յարձակվում
էր, ինձ հայտնում էր, ինձ ծաղրում էր, կամ
ինձ վրա կարկաղանքներ էր նկարում, այսօր
հրատարակվեցաւ առանց ինձ ծաղրելու: Դա
ապացոյց է որ ես իմ առաջվայ նշանակութիւնը
կորցրել եմ: Եթէ այդպէս կը շարունակվի, աւե-
րացրեց առաջին մինիստր, չուտով ես ստիպված
կը լինեմ հրաժարական տուլ իմ պաշտօնից:

**

Բայց ամենից առելի յարձակվում է մեզ վրա
«ՕճՅՅՅ» թերթը... Աստուած բարի վայելում
տայ...
Ինչ ուղում էք կայ նրա յօդուածների մէջ...
Մի անգամ նա ասում է որ տեղական լեզուով
հրատարակվող լրագիրները ապագայ չունեն,
որովհետև մեր ինտելիգենցիան նրա հօրն ողոր-
մի... Երբքան դարգացաւ որ էլ հարկաւորու-
թիւն չունի տեղական լեզուներով հրատարա-
կվող լրագիրների մէջ (այլ իր կրթութիւնը, իր
զարգացումը երեկ պէտք է ստանայ «ՕճՅՅՅ»
լրագրի պէս հանձնարել թերթից), միւս անգամ
ասում է որ նա յարձակվում է տեղական լրա-
գրութեան վրա, որովհետև սիրում է նրան և

կամենում է որ աշողլի, և որ նա (նվ է այդ
մեզ բոլորին անծանօթ գրողը) «Մշակի» հիմ-
նող է, ինչիցիա տիվ տուող է կեղև, նա է համո-
զել խմբագրին հրատարակել հայոց թերթ, եթէ
ոչ, մինչև այժմ հայոց թերթ գոյութիւն էլ չէր
ունենայ...

Այդ տեսակ ինքնահաւան յիմարութիւն մենք
չէինք սպասում պ. Նիկոլաձէից...

Գնք զրդեցիք Գրիգոր Արծրունուն հայոց լը-
րագիր հրատարակել... Հն, հն, հն... Գուք
ստուղ էք պարոն, թէ գուցէ ձեզ բիլիկ է հար-
կաւոր...

Որքան ինձ, ֆելիտոնիստին, յայտնի է, «Մը-
շակի» խմբագիրը զեռ երկուայ ժամանակ, գիմ-
նադատ ժամանակ, դեռ հայերէն մի խօսք չի-
մանալով, և յետոյ որպէս Մօզդոկի և Ս. Պե-
տերբուրգի համալսարանի ուսանող, անդադար
կրկնում էր թէ պէտք է ժամանակակից մի հայոց
թերթ հրատարակել: Նորա բարեկամները երեկ
յիշում են որ 1865 թվին, երբ նա «Մեղու Հա-
յատանի» լրագրում տպեց իր առաջին յօդվածը
(որ երեկ դեռ սխալներով լի էր և որին դրսե-
ցին թէ Ս. Պետերբուրգի բարեկամները և թէ
«Մեղուի» խմբագիրը), այն ժամանակ արդէն
ոչ թէ միայն հաստատ գիտաւորութիւն ունէր
հրատարակել մի հայոց թերթ, բայց և լրագրի
անունը որոշված էր... լրագիրը պէտք է անուն-
վէր «Մշակ»:

Այդ տեսակ, այն, ինքնատէր յիմարութիւն
«ՕճՅՅՅ» խմբագրի և նրա խմբագրութեան կող-
մից մենք չէինք սպասում...
«ՕճՅՅՅ» լրագիրը, որ այդքան գովում է մեր
ինստիտուցիան, չէ իմանում թէ որքան
ստոր է, ազէտ է, անզարգացած է այդ նրա
գոված հայոց ինտելիգենցիան...
Գուք գիտէք, պ. Նիկոլաձէ, թէ գիտաւորա-
պէս ինչի հայոց ինտելիգենցիան չէ ստանում

Եթէ մենք տպենք զժի տակ, բանասիրականի բաժնում մի յոգուած, որ աստիկ կը գտի թիւրքիային, — այդ չէ կարող փաստել մեր անուան՝ դա խմբագրական յոգուած չէ: Եւ վերջապէս թող մասնաւոր անձինքների կողմից յայտնվեն մեր լրագրում մեր մտքերին հակառակ մտքեր, — մենք շատ ուրախ ենք և հիւրասիրութիւն կը տանք նրանց զրկածներին մեր էջերի մէջ:

Միայն մենք երկու բան երբէք չենք համբերի՝ նախ որ մեր տանը մեզ հայհոյեն, և երկրորդ որ այնքան անազնիւ լինեն, որ ի չար գործ դնեն մեր հաւատարմութիւնը և մտցնեն մեր լրագրի մէջ, առանց որ մենք իմանայինք, մի առաջնորդող յոգուած որ ընդգէմ լինէր մեր ուղղութեանը....

Մենք մեր ձեռքը գնելով մեր խղճմունքի վրա, կարող ենք հաստատ ասել որ խմբագրական յոգուածներում մենք ոչ մի անգամ չենք հակառակել մեզ մեր լրագրի վեց տարվայ ընթացքում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՐՁԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԽՕՍԻՐ «ՕԵՅՕՐԵ» ԼԻՍԿՈՒ ՄԱՍԻՆ:

Կուզենայինք երկու խօսք ասել «ՕԵՅՕՐԵ» լրագրի հիմնադիր լեզուագիտութեան և այդ լրագրի ուրիշ լեզուներից ուսուցիչ թարգ-

մանելու երեւելի ընդունակութեան վրա: Չը գիտենք արդեօք դիտմամբ են թարգմանված մեր լրագրի № 17-ի առաջնորդող յոգուածը այն անձունի լեզուով, թէ որովհետեւ ամբողջ խմբագրութեան մէջ ոչ ոք հայերէն չը գիտէ և ամենից լաւ հայերէն գիտցող երեւի պ. Իգնատիոս է... Այնպէս որ կարելի է այստեղ նմանվելով Գոգոլի Սթրանկիւնի խօսքերին, ասել «ՕԵՅՕՐԵ» լրագրի խմբագրութեան մէջ ոչ ոք չը գիտէ հայերէն, միակ մարդ որ գիտէ հայերէն, պ. Իգնատիոս է, և նա էլ բոլորովին չը գիտէ հայերէն»: Չը գիտենք, ինչ է պատճառը, բայց գիտենք միայն որ թարգմանութիւնը շատ անձունի է:

Ինչ և իցէ «ՕԵՅՕՐԵ» լրագրի թարգմանութիւնը նման է մի քանի կիսակիրթ ուսանողների ֆրանսիերէն խօսելուն: Մի ուսուցիչ, օրինակ ուղղում էր ասել «Каждый день тепло своей домъ, а онъ все же сыръ» և այդ պարբերութիւնը թարգմանեց այսպէս «Chaque jour je tape ma maison, mais elle est toujours fromage»:

Իս բոլորովին «ՕԵՅՕՐԵ» լրագրի թարգմանութիւններին նման է:

Եթէ դուք կարծում էք որ հայերէնը կօպիտ, կօշտ, վայրենի է, — փորձեցէք գերմաներէնից, որ շատ զարգացած և ուսուցիչից շատ բարձր լեզու է, բառ առ բառ թարգմանել ուսուցիչի լեզուով և կը տեսնէք թէ ինչ յիմարութիւն կը դուրս գայ: Բառ առ բառ ոչ մի լեզուից չէ կարելի թարգմանել:

Ահա ձեզ օրինակ: Գերմաներէն ասում են «Er ist ausser sich von Wuth», բայց միթէ ուսուցիչն կարելի է ասել «онъ есть внѣ себя отъ бѣшенства»:

Այդպէս էլ ձեր թարգմանութիւնը: Մենք ասում էինք «Հայը միշտ կատաղած է լինում երբ...» և այն, իսկ դուք թարգմանում էք՝ «армянинъ всегда бываетъ свирышъ, когда...» և այլն:

Բայց եթէ «ՕԵՅՕՐԵ» լրագրից, այդ քաղաքակրթեալ և քաղաքակրթող, այդ մեզ լուսաւորող թերթը դիտմամբ վատ թարգմանելով մեր թերթից ուղեցիլ է այդպիսով ծաղրել կամ հայոց լեզու, կամ գոնէ մեզ ուղեցիլ է ցոյց տալ որքան կոշտ և կօպիտ է մեր լեզուն, որքան վայրենի է և անընդուն-

ակ է նա հասցնել մարդուն քաղաքակրթութեան այն բարձր աստիճանին որին հասել են «ՕԵՅՕՐԵ»-ի հանձարիկ խմբագիրները, — այն ժամանակ մեզ մնում է միայն խնդրել «ՕԵՅՕՐԵ»-ի պատուելի խմբագիրներին ընդունել մեր ամենախորին զգգանքը և արհամարհանքը:

Գ. Ա.

«ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ» ԱՄՍՍՍԳԻՐ

Յայտնի իրողութիւն է, որ մեր մէջ ուսումնարանի գործը վերջին տարիները շատ առաջ է գնում: Ժողովուրդը հասկացել է ուսման կարևորութիւնը, ուսումնարանները բազմանում են, հրատարակվում են դասագրքեր, իսկ մեր պարբերական թերթերը մեծ մասամբ լինել են ուսումնարանի վերաբերեալ յոգուածներով:

Բայց այդ բոլորը հատուկապէս, ցրված այստեղ—այնտեղ շունի միութիւն, ներքին կապ: Մեր ուսումնարանի ներկայ դրութեան մասին ճիշտ գաղափար կազմել ցանկացողը շատ դժուար դրութեան մէջ է գտնվում, որովհետեւ նա ստիպված է գնահատել թերթի մէջ հրատարակված հատուկապէս տեղեկութիւններից եղբակցութիւններ կազմել: Նոյնպէս և մանկավարժութեան ասպարիզը մէջ՝ լուսաւորեալ երկրներում եղած նորութիւններին և բարեկարգութիւններին ծանօթանալ կամեցողը դարձեալ նոյն դրութեան մէջն է, գուցէ թէ շատ անգամ աւելի դժուար, որովհետեւ մեր դեպքում թերթը նիւթ չը մատակարարելով՝ դրա մասին, պէտք է գիտել օտար դրականութեան, որ ամենին և ամեն տեղ գտնվում է: Վերջինս արդէն պահանջում է բաւականին նիւթական միջոցներ:

Բացի դրանից ուսումնարանի կեանքի մէջ գործնականապէս պատահում են մեծ դժուարութիւններ: — յոյս են տեսնում գրասրահներ, որոնք թէ և արժանի չեն ամենայնաճր կրթականի, բայց անուամենայնիւ գործ են գրվում տարիներով: Նոր մանկավարժական մտքեր և կարգեր (որոնք իբրև անհրաժեշտ

ճշմարտութիւններ ընդունված են կրթեալ ազգերի մէջ) մտցնելիս, թարմ կրթասարգին հանդիպում են հին նախապաշարձներ, որոնց դէմ մտքաւարկ, անպաշտպան գրականութեան կողմից, այդ օգտակար ոյժը շատ անգամ վճատվում է և թուլանում:

Կարծեալ, անհետք կորչում են մեր հմուտ և փորձված ուսուցիչների դիտողութիւնները, չունենալով սեփական օրգան, նոքա չեն կարողանում իրանց դառն փորձերով ձեռք բերած դիտողութիւնները արձանագրել իբրև ժամանակակից իրանց յաջորդների: որպէս զի նոր եկողը շարունակելու նախորդի գործը և ոչ թէ նորից սկսել:

Կամենալով նպատակ մեր կողմից այդ խնդիրներին, որոնք են նախ միութիւն տալ դրականութեան մէջ յայտնված, բայց ցրված, մանկավարժական մտքերին և իրողութիւններին, երկրորդ՝ դիւրութիւն տալ հեշտ միջոցով ծանօթանալ կրթեալ ազգերի մէջ ընդունված մանկավարժական նորութիւններին, երկրորդ՝ քննութեան ենթարկել դասագրքեր, ձեռնարկներ և մեր մէջ ընդունված մէթոդները, և չորրորդ՝ միջոց տալ մեր ուսուցիչներին իրանց փորձերը և դիտողութիւնները յայտնել յոգուած և ի գիտութիւն ընդհանուրի, — մենք որոշեցինք հրատարակել «Մանկավարժական Թերթը» հետևեալ պրօգրամայով:

Ա. Կարողական խնդիր և ազգային դաստիարակութեան վերաբերեալ առաջնորդող յոգուածներ: Կարողական գործի ներկայ դրութիւնը մեր մէջ: Սկզբնական ուսումնարանների տղայոց և օրիորդաց: Մանկավարժական բովանդակութիւն ունեցող յոգուածներ:

Բ. Ուսումնարաններին վերաբերեալ տնօրէնութիւնները կառավարութեան և զանազան վարչութիւնների կողմից:

Գ. Մտնելու օսուցութիւն և կրթական գասական գրեանց և մանկավարժական շարագրութիւններին:

Դ. Երևելի մանկավարժների կենսագրութիւնները և մանկավարժութեան պատմութեան վերաբերեալ յոգուածներ:

Ե. Այլ և այլք: — Թղթակցութիւններ: Մանկավարժական ընկերու-

մի հայոց լրագիր, — որովհետեւ հայոց ինտելիգենցիան մեծ մասամբ պատկանում է ծառայողների, պաշտօնեաների դասին... այդ է պատճառը որ նրանք կազմում են ձեռք և ոչ թէ մեր բաժանորդներին մեծ մասը: Եւ եթէ մինչև անգամ այդ ինտելիգենցիան հայերէն իմանար, նա երբէք չէր ստանայ հայոց լրագիր, ոչ թէ այն պատճառով որ նրա մտաւոր պահանջները շատ լայն են (և այդ պահանջներին մենք մեր փոքրիկ ուսումով ի հարկէ լրում տալ չենք կարող, իսկ պարսկերէն չի կարողանալ, իվայլով, Սիմբոսիկի և Բարսովի հարկէ հանձարներ լինելով կարող են բաւականացնել մեր ինտելիգենցիայի պահանջները), այլ այն պատճառով որ մի կողմից մի հայ բարձր ուսում ստացած պաշտօնեայի և նրա ընտանիքի համար, որ բաղկացած է ինտելիգենցիայի մէջ ուսում աւարտած կրթված հայ կնոջից, Մարսովի պանթիոնում կրթվող օրիորդներից, և գիմնազիաներում ուսում առնող երիտասարդներից՝ հայերէն կարգաւ ի հարկէ աստիճ է, կամ գոնէ maunvais ton... իսկ միւս կողմից որ խնդրի վրա այդ մեր չըջանի համար գործնական կէտից նայելով, ուսուցիչ լեզուն հայ է ասիւն, իսկ հայոց լեզուն հայ չէ ասիւն....

Հն, մի բան մտաբայ ասել: Երևի նոյնպէս «ՕԵՅՕՐԵ» խմբագրութեանն էլ (որի անդամներին նա այն ժամանակ որպէս մասնաւոր անձինքներին էլ չէր ճանաչում) պարտական է «Մշակի» խմբագրի, որ դեռ գերմանական ուսանող ժամանակ դիտմամբ գնաց Վիեննա և վենեցիա որ հայերէն սովորի: Հայերի Միութեանը հարկը Արժուրդի ասում էր թէ պէտք է հայոց լրագիր հրատարակել և երևի չեն յիշում որ նա ասել է պարտական է այդ մտքով պ. պ.

Նիկոլաձէին և Նիկոլայովին (որոնց գոյութեան մասին նա, այն ժամանակ տեղեկութիւն էլ չուներ):

Գիտէք ինչին նման է պ. Նիկոլաձէի յանդիմանութիւնը (գիտե՛ք թէ նա յորդորում էր «Մշակի» խմբագրին հրատարակել իր թերթը) — պ. Նիկոլաձէի վարմունքը նման է հետևեալ յանդիմանութեանը:

Կիցուք իմ ծանօթ կանանցից մինը ծնել է, ևս գալիս եմ նրա տունը որ շնորհաւորեմ նրան և տեսնում եմ թէ նա բերել է մի առողջ աղայ:

— Այդ դուք ինձ, իմ ինքիդատիկին էք պարտական, տիկին, որ բերել էք այդ տեսակ առողջ երեխայ, ասում եմ ես:

— Ինչպէս թէ ձեզ եմ պարտական, պարոն, ասում է իմ ծանօթ տիկինը չիտոված և երևի ինձ դիմ համարելով:

— Այո, պատասխանում եմ ես սառն կերպով, որովհետեւ ես եմ ձեզ խորհուրդ տուել, դեռ երբ օրիորդ էիք, պատկիւն ձեր այժմեան ամուսնու հետ:

— Այդպէս ի՞նչ լինի դատել, շատ իրաւայի կերպով պատասխանում է ինձ կինը: Գուք դատում էք բոլորովին այնպէս երեսայական կերպով, ինչպէս «ՕԵՅՕՐԵ» լրագրի դատում է «Մշակի» մասին: Ճշմարիտ է, դուք ինձ խորհուրդ տուիք իմ այժմեան ամուսնու հետ պատկիւն, բայց դա իմ կազմուածքից էր կախված առողջ կամ հիւանդ երեխայ ծնելու... և ոչ թէ ձեր ինքից ի տարվից....

Այս օրերս անցնելով փողոցում ինձ պատահեց լսել մի փոքրիկ տղայի բերանից, որ ծախում էր տեղական լրագիրները, մի ի հարկէ ան-

դիտակցական, բայց շատ աջողած սրամտութիւն: Տղան լրագիրների անունները տալով և երևի չը կարողանալով НОВЫЙ «ՕԵՅՕՐԵ» խօսքը արտասանել, կանչում էր՝ НОВЫ «ՕԵՅՕՐԵ»... Այդ փոքրիկ տղան չէր գգում որ անգիտակցական կերպով ամենատղիվ կրթակի էր արել պ. Նիկոլաձէի թերթի մասին... Պարտմունք անկող լուսաւորիչներ, նոր յայտնված հանձարներ, դուք չափից դուրս ազատ էք, չափից դուրս անյաղախորժակ ունէք, իսկ որ արժօրներ էք...

Բայց բաւական է արդէն «ՕԵՅՕՐԵ» թերթի մասին խօսելու:

Ընթերցողին էլ երևի զղկեց: Մեր տեղական լրագրութեան վրա խօսելով ևս յիշեցի մի անցք որ շատ լաւ նկարագրում է մեր հայոց ինտելիգենցիային: Մեր ծանօթ պարսկերէնից մինը գիտում է իր ծանօթներից մի-նին ասելով «Ինչի չէք գրվում «Մշակին»»:

— Ինձ ոչ ոք չէ առաջարկել այդ լրագրին բաժանորդ գրվելու, պատասխանում է պարսկերէնը:

— Միթէ ձեզ առաջարկում են գրվել «Трудъ, Вѣстн.», կամ «Кавказъ» լրագրիներին, միթէ դուք ինչեք չէք գրվում...:

— Այդ ուրիշ բան է: Բայց էս չէի կարծում որ Արժուրդն իմ տաս բուրլ հարկաւոր են, եթէ ոչ ես նրան կը տայի...:

Տեսնում էք ընթերցող, ինչպէս գեղեցիկ պատասխան: Ռուսաց լրագրին կարելի է գրվել կամաւոր կերպով, իսկ հայոց լրագրին գրվում են միայն ինչպէս բարեգործական նպատակով մի որ և է ստորագրութեանն են, գրվում... Ողորմութիւն են տալիս... Ահա մեր ինտելիգենցիան, անհ նրա դատողութիւնը...:

Այժմ նրա խելքի վրա ինքները դատեցէք...:

Իսկ պատահեալով ինչ են անում...:

Կիցուք Գանձակում, Երևանում, կամ Սիմբուրում մի որ և է Պետրոս իմանում է թէ Պօղոսը Թիֆլիսից «Մշակը» բերել է տուել: Նա այնքան և գուցէ աւելի շատ միջոցներ ունի քան Պօղոսը, նա աստիկ ցանկանում է «Մշակը» կարգաւ, բայց չէ ուզում տարեկան 10 բուրլ տալ (իսկ յետոն էլ, հարկերն էլ կը տայ իր թէֆի համար, իր սիրուհուն, կամ չապրութեան մի որ և է աւարակայի համար), Ուրեմն ինչ է անում մեր Պետրոսը... Ես գնում է փոստը, երբ գիտէ թէ լրագիրները ստացվում են և գործանում է պատահանից «Մշակի» համարները... Ահա հայի զեղեցիկ յատկութիւններից մինը...:

Բայց գուցէ հայը այդ անում է, որովհետեւ զգում է որ չուտով այնքան հայոց թերթեր, լրագրիչներ և ամսագրիչներ կը լինեն, որ էլ միջոց չենք ունենայ բոլորը ստանալ: Կարծեալ մի նոր հայոց ամսագիր պէտք է չուտով հրատարակվի «Մանկավարժական» անունով:

Արդեօք մանկավարժութիւնը բաւում պ. Տէր-Յովհաննիսեանց փոքրիկ, թէ մեծերի դաստիարակութիւն է հասկանում: Մենք կարծում ենք որ միջ կրթասարգէս մեծերին պէտք է կրթել... սկսած պ. պ. մանկավարժներից:

Մեր ազգի պէս մի ազգ, որ ապրում է և զարգանում է առանց դաստիարակութեան և առանց կրթութեան, կարծեմ ուրիշ ազգ չը կայ աշխարհիս երեսին:

Ինչ թէ շատ ուսում ստանալուց յետոյ հայը դուրս է գալիս դարձողից և այնուհետև ամբողջ կեանքի մէջ էլ ոչ մի տեսակ բարոյական ազդեցութեանը չէ ենթարկվում: Նա ոչ եկեղեցուց քարոզիչներ է լսում, որոնք, եթէ ունենալինք ընդունակ եկեղեցականներ, բաւական մը-

Թիւնները, խորհուրդները և ժողովների օրագրութիւնները:

Ձ. Յ ա յ ա ր ար ու թ ի լ ն ն ե ր մ ս ո ի ն ա գ ր ու թ ի ն և ա ռ հ ս ս ար ա կ ու ս ու մ ն ա ր ա ն կ ա ն գ ր ը ի ն վ ե ր ա ր ե ր ա լ:

Այս գործի մէջ մեզ ընկեր և մշտական աշխատակից կը լինի պ. Յովհաննէս Զիգիստանց, տեսուչ Յովհաննէս օրիորդաց ուսումնարանի: Կաշխատակցին մեզ նոյնպէս մեր ուսումնարանական գործի մէջ յայտնի փորձառու գործող անձինքը: Տարեկան 12 դրոյցի, իւրաքանչիւրը 4-6 թերթ (64—96 էր.)): Տարեկան գինն է 6 ռուբլ ամենայն տեղ: Առաջին գրքիցը դուրս կը գայ տարւոյս ապրիլ ամսին:

Խմբագրութեան հասցէն՝ Типографія Армянскаго журнала „Педагогическій Листокъ“. Сололаки, Садовая улица, д. № 42.

Քաղաքիս մէջ ստորագրվել կարելի է պ. Ն. Մատուրեանցի խմբագրութեամբ Վիզորդի վճարումը և պ. Ձ. Գրիգորեանցի գրալուծականացումը:

Խմբագիր Յակոբ Ժէր-Յովհաննիսեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Կերմանիայում ազատական և պահպանողական կուսակցութիւնները միացած են արևելեան հարցի վերաբերութեամբ: Կերմանիան ոչ—պաշտօնագէտ յայտնել է աւստրո-ունգարական կառավարութեան, Վիեննայից գրված թղթակցութիւններին նայելով, թէ գերմանական շահերը ուղղակի վտանգ չունեն արևելեան հարցի մէջ, ուրեմն և Կերմանիան շատ չէ վերոյվել դրա պատճառով: Հեռագիրը արդէն տեղեկացրեց մեզ որ Կերմանի իշխանը պարզամտեամբ խօսած ձևով մէջ ասել է թէ ինքն յոյս չունի որ եւրոպական պատերազմ բացվել արևելեան հարցի համար: Այդ յուսով և իր շահերին վտանգ չը տեսնելով, Կերմանիան խաղաղ և հանդարտ գրութեան մէջ է: Կերմանիայի դաշնակցական խորհրդարանում վիճարկութիւն է բացվել կանցլէրի

տեղապահներ զննու համար առաջարկված օրէնքի վրա: Այդ կարևոր վիճարկութեան մասնակցում էին Բալարիայի, Սաքսոնիայի և Վիրտեմբերգի առաջին մինիստրները: Այս կերպորդական տեղութիւնները չեն ուզում որ կայսերութեան կանցլէրի տեղապահներ լինեն որպէս զե իրանց և կայսերութեան մէջ նոր միջնորդներ չաւերանան: Դրա համար աշխատում են որ այդ առաջարկված նոր օրէնքը չը հաստատվի կամ գոնէ փոփոխված ընդունվի: Ուշադրութեան արժանի է այս կէտը որ տեղապահ մինիստրները կը լինեն Պրուսիայի մինիստրներ, ուրեմն աւելի պրուսական քան թէ դաշնակցական շահեր պաշտպանողներ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիեննայի «Politische Correspondenz» լրագիրը հետեւեալ նամակը ստացաւ: Գարսից յունվարի 6-ին (18-ին): Գարս տիրուց յետոյ, մեր քաղաքը տեսքը շատ փոփոխեալ: Խառնութիւնը նորից բացվեցան, վաճառատնոցները նորից կենդանութիւն ստացան, փողոցներից ջերմ մաքրվեցաւ, և քաղաքի մէջ նորից կենդանութեան նշույլ է երևում: Հարկաւոր է յիշել այստեղ որ թիւրք ազգաբնակիչների կրկնը բոլորովին փախած վիճակի մէջ է: Պոլսից պաշտօնական կերպով հաղորդել էին մասնատականների որ Եփեսոսից պատերազմում են ոչ թէ սուլթանի և նրա կայսերութեան դէմ, այլ նրանք կուզեն են խաղաղութեամբ յաղթողի և նրանց հաւատքի դէմ: Այժմ երբ ուսմանը տիրեցին այս քաղաքին, այստեղի մեջիցներ խօշտանք իրանց սկանչներին չէին հաւատում, երբ ուսմանը իրականը տեսցին նրանց կատարել ինչպէս առաջ իրանց կրօնական պարտաւորութիւնները: Ռուսաց զենեւաները շատ դժուարութեամբ կարողացան հաւատացնել նրանց, որ ամենքը ազատ են իրանց կրօնական պարտաւորութիւնները կատարել, որից յետոյ մասնատականների մուկէճիները համարձակութիւն ստացան բարձրանալ մեջիցների մինիստրներին վրա և կանչել ուղղափառներին մեջիցներում: Ռուսները շատ քաղցր կերպով են վարվում մասնատականների հետ և զրանով կանխում են ցոյց տալ նրանց թէ ինչքան զանազանութիւն կայ ռուս և թիւրք կառավարութիւնների մէջ: Մեծ Կոնստանտնուպոլիսի կարգադրութեամբ իրանց պաշտօնների մէջ թողվեցան Գարսի մէջ գտնվող բոլոր մասնատական պաշտօնատարները և նոյնպէս իրականը արվեցաւ նրանցից արժանաւորներին ուսուցող պետական ծառայութեան մէջ մտնել, առանց խտրութիւն զննելու կրօնի և ազգութեան մէջ: Եւ արդարև մօտ 24 մասնատականներ մասամբ կադիներ նշանակվեցան և մասամբ ուրիշ բարձր պաշտօններ ստացան: Ռուսաց կառավարութիւնը այն աստիճան ներդրում կերպով է վարվում մասնատականների հետ, որ մի քանի թիւրք աստիճանատարներ կանչաք երբ խոյրըք ներկայացրին կառավարութեան, որ այնքան ուժեղ նշանակեն իրանց մարդկիւրանց որքան ստանում էին Բ. Կրնից, կառավարութիւնը ընդունեց նրանց

կամ լրագիր աշխատակիցը, դու աւելի լաւ պէտք է խմանա, դու խօ ընթերցող ես...

- Չէ, ես չեմ կարդում...
—Ուրեմն ինչի ես հարցնում:
—Նոյնպէս և ուսուցչին պատահելու ժամանակ:
—Ի՞նչ են անում ձե ր ուսումնարանները:
Եւ այդ ձե ր բառը արտասանում է ինքն հայ մարդը... բարձր ուսում ստացած հայ մարդը...

Այն, հայոց լրագրութիւնը ծաղկում է: Մինչև անգամ մարդը շատ անգամ մոռանում է թէ կայ աշխարհիս երեւին օրինակ «Փորձ» կամ «Հայկական Աշխարհ», բայց յանկարծ այդ տեսակ հանդիսի մի տեսակի գալիս է... Օրինակ փետրվար ամսի 14-ին, 1878 թ.ին ստանում էք «Հայկական Աշխարհ» ամսագրի 1877 թ.ի հոկտեմբերի, նոյեմբերի և դեկտեմբերի տետրակները: Երբ բոլորովին մոռացած էինք որ աւստրական «Հայկական Աշխարհ» և նրա խմբագիր, պարոն հայր խորէն Ստեփանէ, կան աշխարհիս երեւին, բայց նրանք, այսինքն «Հայկական Աշխարհ» և պ. Ստեփանէն, մեզ չեն մոռացել, այլ օրինաւոր կերպով միտում են մեզ իրանց հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների տետրակի մէջ... Ծնորակալ ենք, չէինք սպասում:

Թողնեք մեր լրագրութիւնը և տեսնեք ինչ է կատարվում մեր հասարակութեան և հասարակական կեանքի մէջ: Այս ձեռնարկ պէս անշարժ, մեռած ձեռք, դեռ չենք տեսել: Ամենքը զբաղված են պատերազմով: Բազմաթիւ զոհեր ընկնում են այնտեղ, հեռու մեզանից, պատերազմական դաշտի վրա, որը գնտակից, որը հիւանդութիւնից: Դատարը, կարծես նախանձկող նրանց, մոռնում են իրանց տան մէջ հանգիստ նստած ժամանակ: Այ մի

խղիւրք: Ռուսների այսպիսի փորձերը գրաւում է, ի հարկէ, տեղական մասնատական ազգաբնակիչների համակրութիւնը: Բացի սրանից Ռուսաստանը ամեն միջոց գործ է դնում թիւթեանցիկ որքան կարելի է տեղական ազգաբնակիչների դէմ: Ռուսաց զորքերը տեղաւորված են ոչ թէ միայն ամրութիւնների և նախկին թիւրքաց զորանոցների մէջ, այլ և վեց գունդ տեղաւորված էին բնակիցները մասնաւոր աներում, քաղաքում և նրա շրջակայքում: Խիստ ցուրտ և այստեղ մի քանի շաբաթ ծածկված խոր ձիւնը, թող չեն տալիս որ զորքերին վրաններում բնակեցնեն: Բացի սրանից այստեղի հիւանդանոցներից հեռացրին տիֆոյի հիւանդներին, որոնց թիւը հասնում է 2,400 և ուղարկեցին նրանց մօտիկ տեղեր: Դատար աներ ուր հիւանդներին էին ընդունում, կեղտոտութեան պատճառով փակվեցան, իսկ ինչ վերաբերում է այս տեղի քրիստոնէականներին, որոնք մեծ մասամբ հայերից և յոյներից են բաղկացած, կատարելագէտ կենդանանում են նոր կառավարութեան տակ: Հայերը, որ առհասարակ հարուստ մարդիկ են, իրանց սովորական աշխատանքներով սկսեցին նորոգել իրանց տները և հայոց թաղում արնայի մեծ գործունէութիւն է նկատվում, որ լաւ ապակարութիւն է գործում մարդու վրա: Մինչև անգամ 12 մարդաբէնիկ անտնով հին կենդանի, որ մի քանի դար չէր նորոգված, այժմ հիմքից նորոգում են: Իսկ ինչո՞ւ ուսուցող աստիճանատարների կեանքը այստեղ անտանելի է: Կենսաբանական կեանքը մեծ մասամբ անցյալից անցել էր կայ: Մասնատականների հետ յարաբերութիւն ունենալ անկարելի է, հայերն էլ թիւրքաց կառավարութեան բռնաւորական ծի տակ գտնվելով, սովորել են փաթ կեանք վարել: Այս գէպերում ամենքը էլ շնորհակալ են գերեւորարդութեան լորիս-Միլիտարից, որ թող ստեղծ աստիճանատարների կրօնի հիմնը: Երբորում մօտ գտնվող զորքայինակցի տխուր լուրեր են ստացվում այստեղ, ստում են գինեւոր Վեյմանի զորքի մէջ տարածված է սաստիկ տիֆ: Եթէ որ կգանալը շուտով չի փոխվի, զորքը այդ տարափոխիկ հիւանդութիւնից ծանր կորուստներ կունենայ: Մինչև այսօր հիւանդների թիւը հասաւ 18% բուրբ զօրքի:

ՎՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳՈՍԵՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆԻՑ
10ՏՊՈՅ, 12/24 փետրվարի: Բէյտէրի հեռագրական ընկերութեանը հաղորդում են Կ. Պոլսից 9/21 փետրվարից որ հաշտութեան նոր պայմանները հեռեւեալ զլիսուոր կէտերից են բաղկանում: Բոլղարիայի մէջ կը մանեն մի կողմից Դունայ գետի և Բալկանների մէջ գտնվող բոլոր երկիրները, բացի Կորբուջայից, միւս կողմից Սև ծովի և Սերբիայի մէջ գտնվող երկիրները, նրանց հետ և Մօրիցի ամբողջ ձորի տարածութիւնը, բացի Արլիանսոյից: Ուրեմն Բոլղարիայի մէջ կը պարունակվին նոյնպէս Սօֆիա և Ֆիլիպպոպոլ քաղաքները: Անուանի բոլղարացի-

ների ժողովը կընարի իշխանին, որի նշանակութեան հաստատելը կարկած կը լինի թիւրքիայից և եւրոպական պետութիւններից: Այն տուրքը որ Բոլղարիան կը սայ թիւրքիային, հաւասար կը լինի այդ նահանգից ստացվող այժմեան զուտ արդիւնքին: Ռուսաց յանձնաժողովը կը հսկէ մի տարկայ ընթացքում Բոլղարիայի կառավարութեան վրա: Այդ ժամանակամիջոցում Բոլղարիայի մէջ 50,000 ռուսաց զօրք կը կանգնի: Պօզդորիցա և Անտիվարի միանում են Չերնօզորիային, որ ստանում է նոյնպէս և այլ մի քանի կտոր երկիրներ հիւսիս արևելքից և արևմուտքից: Ռուսաստանին իրաւունք է ծանաչվում Կորբուջան Բուսիային տալ Բէսարաբիայի փոխարէն: Սերբիան նշանաւոր կերպով ընդարձակվում է Բոսնիայի կողմը: Սերբիայի կազմակերպութիւնը նոյն է մնում: Ներդրւցների միջով անցնելը արգելվում է բոլոր պատերազմական նաւերին, բացի առանձին անհրաժեշտ դէպքերից: Առևտրական նաւագնացութիւնը անպայման ազատ է յայտնվում, մինչև անգամ պատերազմի ժամանակ: Ռուսաստանի վարձատրութիւնը նշանակվում է 1400 միլիոն ռուբլ, որ գումարը ծածկելու համար թիւրքիան զեջանում է Ռուսաստանին Բաթում, Ղարս, Արդահան, Բայազէթ և նրանց մէջ գտնվող հողի տարածութիւնը, նոյնպէս վեց զրահաւոր նաւեր Ռուսաստանի ընտրութեամբ: Բացի սրանից թիւրքիան վճարում է Ռուսաստանին 40 միլիոն ֆունտ ստերլինգ օրիգինալներով, որոնց հանդէսն առկաները ապահովում են Բոլղարիայի սուբբոլի նգիպտակ հարկերով, Անատոլիայի արդիւնքներով, և Հերակլիայի հանքերով: Մնացած 10 միլիոն ռուբլ վճարվում է ամիջապէս և գործ է դրվում Կ. Պոլսի մէջ գտնվող ռուսաց հպատակների վարձատրութեան համար, և ի նպատակ նրանց հիմնարկութիւններին, նոյնպէս ռուսաց ձեռքբերում գտնվող թիւրքաց օրիգինալների վճարման, թիւրք գերիներին պահպանելու ծախսերի և Դունայ գետի Սուլինա կոչված բերանը ուղղելու համար: Հաշտութիւնը ստորագրված կը լինի Սան-Ստեֆանոյի մէջ, որտեղ ռուսները կը մանեն Բ. Կրան հասնաձայնութեամբ:

Ոչինչ որ արժանի լինէր նկարագրել ֆեյլի տօնում:

Ամեն տեղ մեռելութիւն:

Վերջացնում եմ ֆեյլիտօն ընթերցողին երկու բան պատմելով աղբային կեանքից: Մօզդոկում հայոց հասարակութիւնը այնքան բուսաւորվել է որ այժմ էլ ուրիշ բան չունի անելու, եթէ ոչ զուարճանալ և ուրախ անցկացնել իր ժամանակը: Հասարակութիւնը հազարներ է ծախում կուր բացանելու համար և մեծ քանակութեամբ խաղալու թուղթ է բերել տալիս... Ա՜ն հայութիւնը...

Ուրիշ բան պատմեմ: Մի հայ կաթողիկ պարոն, այն օրից երբ «Մըշակը» ամենօրեալ դարձաւ, կանուսաւոր կերպով անում էր մեր համայնքը հատով և մեծ հետաքրքրութեամբ կարդում էր: Յանկարծ մեր լրագրի № 22-ի մէջ նա կարդում է Պիտո IX-որդ պապի կենսագրութեան առաջին մասը: Եւ ինչ էք կարծում, ինչ է անում մեր հայ-կաթողիկ պարոնը—նա միւս օրից դադարեցնում է «Մշակի» հատով առնելու և գրվում է մի ուրիշ հայ լրագրին տակով «Եթէ «Մշակի» խմբագիրը ինչօք մարդ է, նա այդ տեսակ բան չը պէտք է գրէր...»

Ընթերցող, հիմա ինչ անեք՝ մենք դադարեցրեց Պիտո IX-որդի և նրա նմանների վրա գրելը, թէ կորցնեք մեր բոլոր հայ-կաթողիկ բաժանորդներին... Գուրբ մեռեցէք: Աւիպի

